

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

25 հունվարի, 2008 թվական

**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ,
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(2009 թվականի դեկտեմբերի 11-ի Արձանագրության խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր, ընդունելով միջազգային առեստրի համընդհանուր ճանաչում ունեցող նորմերը եւ կանոնները, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացությունները

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հետեւյալ տերմինները.

անուղղակի հարկեր՝ ավելացված արժեքի հարկ (այսուհետ՝ ԱԱՀ) եւ ակցիզներ (ակցիզային հարկ կամ ակցիզային գանձում),

զրոյական դրույքաչափ՝ ԱԱՀ-ով հարկում զրո տոկոս դրույքաչափով, ինչը ԱԱՀ (վճարողների) հարկ վճարողների համար նշանակում է բյուջեից ԱԱՀ գումարների փոխհատուցման (հաշվանցման, վերադարձման) իրավունք,

հարկ վճարողներ (վճարողներ)՝ Մաքսային միության մասնակից պետությունների հարկեր, գանձումներ եւ տուրքեր մուծող հարկ վճարողներ (վճարողներ),

ապրանք՝ իրացվող կամ իրացման համար նախատեսված ցանկացած շարժական եւ անշարժ գույք, էներգիայի բոլոր տեսակները,

աշխատանք՝ գործունեություն, որի արդյունքներն ունեն նյութական արտահայտություն եւ կարող են իրացվել կազմակերպության ու (կամ) ֆիզիկական անձանց կարիքների բավարարման համար,

ծառայություն՝ գործունեություն, որի արդյունքները չունեն նյութական արտահայտություն, իրացվում եւ օգտագործվում են այդ գործունեության իրականացման ընթացքում, ինչպես նաեւ արտոնագրերի, լիցենզիաների, առետրային նշանների, հեղինակային իրավունքների կամ այլ իրավունքների փոխանցում, տրամադրում,

ապրանքների արտահանում՝ հարկ վճարողների (վճարողների) կողմից իրացվող ապրանքների դուրսհանում Մաքսային միության մասնակից պետության տարածքից դեպի Մաքսային միության այլ մասնակից պետության տարածք,

ապրանքների ներմուծում՝ հարկ վճարողների (վճարողների) կողմից Մաքսային միության այլ մասնակից պետության տարածքից ապրանքների ներս բերում Մաքսային միության մասնակից պետության տարածք,

իրավասու մարմիններ՝ Մաքսային միության մասնակից պետությունների ֆինանսների նախարարությունները, հարկային եւ մաքսային մարմինները:

Հոդված 2

Անուղղակի հարկերի գանձման սկզբունքն ապրանքների արտահանման ժամանակ

Ապրանքների արտահանման ժամանակ կիրառվում է ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ եւ (կամ) ակցիզների վճարումից ազատման արտոնություն (վճարված գումարի փոխհատուցում)՝ պայմանով, որ արտահանման փաստը հաստատվի փաստաթղթերով:

Հոդված 3

Անուղղակի հարկերի գանձման սկզբունքն ապրանքների ներմուծման ժամանակ

Մաքսային միության այլ մասնակից պետության տարածքից Մաքսային միության մասնակից պետության տարածք ապրանքների ներմուծման դեպքում անուղղակի հարկերը

գանձվում են ներմուծող պետության հարկային մարմինների կողմից, եթե այդ պետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ ակցիզային դրոշմանիշներով (հսկիչ նշաններով, դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա ապրանքների համար: Անուղղակի հարկեր չեն գանձվում Մաքսային միության մասնակից պետության տարածք այն ապրանքների ներմուծման դեպքում, որոնք, այդ պետության օրենսդրության համաձայն, ենթակա չեն հարկման դրա տարածք ներկրելու ժամանակ:

(2009 թվականի դեկտեմբերի 11-ի Արձանագրության խմբագրությամբ)

Որոշակի (հատուկ, ազատ) տնտեսական գոտիներ (այսուհետ՝ ԱՏԳ) ներմուծման դեպքում անուղղակի հարկերի կիրառության առանձնահատկությունները սահմանվում են Կողմերի միջև կնքվող միջազգային պայմանագրով, որով կարգավորվում են ԱՏԳ-ների գործելու, ԱՏԳ-ների տարածքներ ներկրվող ապրանքների հարկման կարգի եւ ազատ մաքսային գոտու մաքսային ընթացակարգի սահմանման հետ կապված հարցերը:

(2009 թվականի դեկտեմբերի 11-ի Արձանագրության խմբագրությամբ)

Փոխադարձ առեւտրում ներմուծվող ապրանքների համար անուղղակի հարկերի դրույքաչափերը չպետք է գերազանցեն անուղղակի այն հարկերի դրույքաչափերը, որոնցով հարկվում են ներքին արտադրության համանման ապրանքները:

Հոդված 4

Անուղղակի հարկերի գանձման կարգը եւ դրանց վճարման նկատմամբ վերահսկողությունը ապրանքների արտահանման ու ներմուծման ժամանակ

Անուղղակի հարկերի գանձման կարգը եւ ապրանքների արտահանման ու ներմուծման ժամանակ դրանց վճարման նկատմամբ վերահսկողության մեխանիզմը իրականացվում են Կողմերի միջև կնքվող առանձին արձանագրությանը համապատասխան:

Հոդված 5

Անուղղակի հարկերի գանձման կարգը աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ

Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգն իրականացվում է կողմերի միջև կնքվող առանձին արձանագրությանը համապատասխան:

Հոդված 6

Հարկային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակումը

Անուղղակի հարկերի լիարժեք հավաքումն ապահովելու նպատակով Կողմերի հարկային մարմինների միջեւ տեղեկությունների, այդ թվում նաեւ՝ տվյալների ցանկի, փոխանակումն իրականացվում է առանձին միջգերատեսչական արձանագրությանը համապատասխան:

Հոդված 7

Համաձայնագրի փոխհարաբերությունը միջազգային այլ պայմանագրերի հետ

Սույն Համաձայնագրի դրույթները չեն ազդում Կողմերի՝ միջազգային այն պայմանագրերից բխող իրավունքների եւ պարտավորությունների վրա, որոնց մասնակիցն են իրենք:

Հոդված 8

Վեճերի լուծումը

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վեճերը լուծվում են Կողմերի միջեւ քննարկումների եւ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում, փոխանցվում են Եվրասիական տնտեսական ընկերակցության դատարանի քննությանը:

Հոդված 9

Փոփոխություններ եւ լրացումներ

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 10

Եզրափակիչ դրույթներ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Մաքսային միության պայմանագրաիրավական հիմքի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» արձանագրության²-րդ հոդվածի համաձայն:

(2009 թվականի դեկտեմբերի 11-ի Արձանագրության խմբագրությամբ)

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2008 թվականի հունվարի 25-ին, մեկ բնօրինակից, ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Եվրասիական տնտեսական ընկերակցության ինտեգրացիոն կոմիտեում, որը որպես սույն Համաձայնագրի պահառու, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի իր վավերացված օրինակը:

(ստորագրություններ)